ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 161 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի N 40-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02600539) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2026 թվականի փետրվարի 4-ի «Հիմնատավուշ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Գյուղատնտեսության զարգացում» ծրագրի մասին» N 40-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2026 թվականի փետրվարի 11-ին կնքված՝ N 11/02/26 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վառելիքի կտրոնների ձեռքբերում՝ 20,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Սմարթագրո» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03549691) 2026 թվականի փետրվարի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է անասնաբուժական գործիքների, սարքավորումների ու պարագաների մատակարարում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ատ Գազ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07619068) 2026 թվականի փետրվարի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սեղմված բնական գազի մատակարարում՝ 2,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Կոլտիվա» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00221453) 2026 թվականի փետրվարի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ախտահանիչ նյութերի և կթի սարքավորումների պարագաների մատակարարում՝ 6,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Սոֆադ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00019746) 2026 թվականի փետրվարի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մաքրող և սանիտարահիգիենիկ միջոցների մատակարարում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Էզաս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07613096) 2026 թվականի փետրվարի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դեղորայքի մատակարարում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 03810806) 2026 թվականի փետրվարի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջուր փափկացնող աղի և ֆիլտրերի մատակարարում՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Էվրի դեյ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09104669) 2026 թվականի փետրվարի 2-ին կնքված՝ N 32797_J_26 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տարաներով ջրի և բաժակների մատակարարում՝ 1,600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Վետֆարմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04427162) 2026 թվականի փետրվարի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դեղորայքի մատակարարում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Շինմետ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 07622956) 2026 թվականի փետրվարի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական ապրանքների մատակարարում՝ 3,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

11) «Մեդիսար» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02555635) 2026 թվականի փետրվարի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է քիմիկատների մատակարարում՝ 1,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

12) «Ինգլիշ Թրեյդ Հաուզ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02550253) 2026 թվականի փետրվարի 10-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մեքենաների, սարքավորումների և տրակտորների յուղերի մատակարարում՝ 500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

13) «Երեք Ար Ստրատեգիա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02600539) 2026 թվականի փետրվարի 9-ին կնքված՝ N 01/2026 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Գյուղատնտեսական կոոպերատիվների կառավարում» վերապատրաստման ծառայության մատուցում՝ 2,046,667 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

25.03.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ